Ծուշանիկ Կուրղինյան

Անքուն գիշերից

Անքուն գիշերից

Խաբված հույսերով, ընկճված հոգով,
Վիշտն ու հոգսը սիրտս կաշկանդած,
Ապրում են անշահ, ես միշտ տանջվելով,
Տխուր օրերս սահում են կամաց:

Եվ ահա անպետք մի դիակ դարձած,
Հանգչում եմ հավերժ իմ նեղ շիրիմում .
Ծաղիկ հասակս մոխիր է հանգած՝
Իմ բաց աչքերից արցունք չի կաթում:

Անցնում են օրեր, տարիք են անցնում՝
Չկա՜ այցելող . . . մի կաթիլ արցունք . . .
Երկրից անունս իսպառ մոռացվում,
Գետնին է կպչում շիրիմս անշուք . . .

Կրում է շղթան գերին հուսալով .
Դեռ վերջ չէ տրվել թշվառի լացին,
Կորչում եմ անհետ իմ վեհ իղձերով .
Միայն մի բուռ հող տալով մայր երկրին . . .

1896